

ՊԱՇԵՑՈՂՈՒԹԻՒՆ


Սեր ժամանակակից սերունդը պահեցողութիւն ըսելով թերեւս կը հասկնայ մսեղէնէ, կաթնեղէնէ եւ ամէն տեսակի կենդանական արտադրութենէն հրաժարիլ: Ասիկա սակայն պահքի մասին ուշ ժամանակներուն եւ քաղքենի դասակարգին ըմբռնումն է: Ակիզբէն այնպէս չէ եղած: Հստ Աստուածաշունչի տուեալներուն, պահեցողութիւնը սուզի եւ ցաւի շրջան մըն է, ինքնազրկանք մը՝ կամ ինքինքին տրուած կամաւոր պատիժ մը, որ կ'իրազործուէր որոշ ժամանակ մը ամբողջովին հրաժարելով ուտելէ եւ խմելէ, ինչպէս նաեւ՝ ամէն տեսակի ՀԱՅՈՅՔԵ: Կարեւոր է այս վերջին պարագան, այսինքն՝ հրաժարի նաեւ հաճոյքէ, որովհետեւ պահք եւ հաճոյք իրարու հակադիր երեւոյթներ են եւ հետեւարար կարելի չէ երեւակայել պահեցողութիւն մը, որուն կ'ընկերանայ նաեւ խաղ, ուրախութիւն եւ պար: Ուրեմն կրօնական նպատակով ինքինքին պարտադրուած որեւէ զրկանք պահեցողութիւն է:

Պահքէն անբաժան էր ԱՀՕԹՔԸ:

Եթէ ուսումնասիրենք սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, թէ ուր որ պահքի մասին հրաման կը տրուէ՝ կը յանձնարարուի միաժամանակ աղօթքը:

ԾՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՅ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ՀՎԱԼԱՅԻՄ

2.-Պատրաստութիւն ընծաներուն

Գ.-ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՐԱՑԱՅԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԽԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԱՍԵՆԵՑՈՒՆ

Դպիրները ընթացք տալով սարկաւոգի թելապրութեամբ սաղմոսերգութեամբ Քրիստոսը կը փառաբանեն, պատարագեալ Քրիստոսը, որ կը բաշտուի հաւատացեալներուն
«Օրիեալ է Աստուած:

Քրիստոս իբրեւ զոհ ընծայուելով մեզի կը բաշխուի, եւ իր սուրբ Արինը կը ցողէ մեր վրայ: Ալէլուիա: Մօտեցէք Տիրոջ եւ իրմէ լոյս տուէք: Ալէլուիա: Ծաշակեցէք եւ տեսէք թէ ի՞նչքան բարի է Տէրը: Ալէլուիա...»

Մինչ գոցուած փարազոյրի ետին՝ պատարագիշ քահանան կ'աղօթք ըսելով:-

«Կը դաւանիմ եւ կը հաւատամ, թէ Քրիստոս ես դուն, Աստուած Որդին, որ աշխարհի մեղքը վերցուցիր... Շարունակելի



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՐՈՒԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՄԱՐՏ 2025

Ժ-Ի-Ի 9

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԹԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԺԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 58.1-14: Հո. 13.11-14.25: Մտթ. 6.1-21

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՎԱԾ ԸՆՍԹԵՇՈՒՄ 6.1-8

Զգո՞յշ, Աստուածոյ հանդէս ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմրուկով մի՛ ընեն, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորներու կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ծախ ձեռքդ բող չգիտնայ, թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, թեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներու մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկինը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթեն, մտիր սենեակդ, զոցէ՝ դուք եւ երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, թեզի պիտի հասուցէ յայտնապէս: Տակալին, երբ կ'աղօթես, մի՛ շատախոսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն, որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիր անոնց, որովհետեւ ձեր Հայրը զիտէ ինչ որ պէտք է ձեզի, մոյնիսկ երբ տակալին իրուէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէս աղօթեցէք. «Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ՝ թող զայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրենայ մեր հացը այսօր ես սուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնապէս յանցանք կը գործնէն: Եւ թոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ իյնանք, այլ՝ մեզ շարէն ազատէ: Որովհետեւ քու կը են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն»: Եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախճանք, ճնխ եւ առատ ուտելիքներով վայելու օր:

Գլխաւոր շաբաթապահերու նախորդ Շաբաթ օրը կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի աւելի ճնխ ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպնք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարեւոր պահպերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահքի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ**:

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն ճնխ սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախճանքներ եւ այլն:

Վաճքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱՔԵՂԱԹՈՂ**:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, եկեղեցւոյ խորանի վարագոյրը կը գոցուի, եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի վարագուրուած խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասնօրեայ ապաշխարութիւնը եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ կամ կարեւոր սուրբերու տօներու առիթով երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ քաց պատարագա:

Բուն Բարեկենդանի շարականները կը պատմեն, թէ ինչպէ՞ս ստեղծվեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր զուարձացեալ անտիրական խնդրթեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շարականներու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի զուարձնութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շարականները նոյն օրը զուարձացնող մարդոց կը յիշեցնեն նաև Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

ՔԱՌԱՍՍՈՐԵԱՅ ՊԱՐԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- Բուն բարեկենդանի Կիրակի
- Արտաքսման Կիրակի
- Անարակի Կիրակի
- Տնտեսի Կիրակի
- Դատաւորի Կիրակի
- Գալստեան Կիրակի
- Ծաղկազարդի Կիրակի
- Ս. Յարութիւն

Հ Ո Գ Ե Բ Ո Ր Դ Ա Ս Գ Ա Ս

ԽԾԱՐԻՑ ԱՍՏՈՒՏԱՊԱՇՏՆԵՐ

Հյանք երրորդ, խոստացեալ երկիրը չմտած՝ անոնք նոր ուխտ պէտք էր կնքէին Աստուծոյ հետ: Չորրորդ, պէտք էր միաստուածութեան հաւատքը դրոշմուէր իրենց սրտին մէջ, քանի տակաւին նոր դուրս եկած էին բազմաստուածապաշտ Եգիպտոսէն՝ երթալու համար ուրիշ բազմաստուածապաշտ երկիր մը՝ Քանաան:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Բ Ո Ր Դ Ա Ս Ը Ը Ը

Յստակ է մեր սորվելիք հոգեւոր դասը: Մկրտութեամբ մեր ստացած Աստուծոյ Հոգին՝ կամաւոր մեղրով կորսնցուցինք եւ գերի տարուեցանք Եգիպտոս: Իսկ գիտակից ապաշխարութեամբ, Քրիստոսով ազատազրուելէ ետք Եգիպտոսէն, այլ խօսրով՝ մեղրի կապանքէն, պէտք է նորոգենք հնագանդութեան եւ հաւատարմութեան մեր ուխտը, եւ ապրինք ճշմարիտ աստուածպաշտութեան կեանք մը: Ճիշդ է, որ մենք բազմաստուածապաշտ չենք, բայց կրնայ ըլլալ դրամապաշտ ենք, աթոռապաշտ ենք, փառապաշտ ենք: Ասոնք ալ կոապաշտութիւն են:

ԱՌԱԿՆԵՐ

Խրատ առէր եւ ոչ թէ արծաթ, զիտութիւն՝ քան թէ ընտիր ոսկի: Իմաստութիւնը աւելի կ'արժէ քան գոհարենները եւ ոչ մէկ թանկարժէք քան կրնայ հաւասարիլ անոր:

Առակներ

ԵԹԵ ԿԱՍ ԵՐ ԿՌՒՋԵՍ...

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ
ՊԱՇՏՊԱՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՆՏՈԵՍ
ԿԱՐԴԱՌ Սաղմոս 5

Ով ՏԵՌ, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՝ առ հեծեաններս: Մտիկ ըրէ աղօքքս, ով իմ թագաւորս եւ Աստածու, կ'աղաշեն քեզի: Ով ՏԵՌ, առոտու կանուխէն լսէ կանչս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ով Աստուած: Դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ, հպարտները չես հանդուրժեր, եւ կ'ատես անօրէնութիւն գործողները, սուտ խօսդները կորուստի կը մատնես, արինահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուիս, ով ՏԵՌ: Բայց ես քու անշափ սիրոյդ ապաւոնած՝ քու Տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

ՏԵՌ, արդարութեամբ առաջնորդ գիս, քու ճամբաղ հարթէ՝ իմ դիմաց, որպէսզի դառնամուտ թշնամիններս տեսնեն, որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն: Բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ով Աստուած, անոնց յանցանքին պատիքը տուր, իրենց խորհուրդները քող կործանեն զիրենք, որովհետեւ քեզի դէմ ըմբռստացան:

**ԱՄԷՆ ՕՐ ԲԱՆԱՆՔ ՄԵՐ
ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔԸ ԵՒ ԱՆՈՐ
ՄԷԶԷՆ ՄԵՐ ԱՂՕԹՔԸ ԿԱՏԱՄԵՆՔ
Ա.Ռ ԱՍՏՈՒԱԾ**